ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 06 » հուլիսի 2023թ. № 117-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ Կառավարության 05. 01. 2022թ. թիվ 14 -ն որոշման սահմանված կարգի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Էդվարդ Մկրչյանի կողմից ներկայացված դիմումը, «Գագիկ Մեսրոպյան» ԱՁ-ի կոցմից կազմված տեղադրական հատակագծերը, ծածկագիր թիվ 2023JQ43YK, որակավորված մասնագետի կողմից կազմված ինքնակամ կառույցի հաշվառման վերաբերյալ տրված 26.05. 2023թ.-ի մուտքագրման տեղեկանքը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով գյուղի 06-101-0052-0016 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,17472 հա հողամասում Էդվարդ Մկրչյանի կողմից 2017 թվականին ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող՝ 32,50 քմ արտաքին մակերեսով և 43,55 քմ շինությունները, առանձնացնել զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի թվին չդասվող 1747,2 քմ մակերեսով հողամաս համաձայն հավելվածի և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Լոռի Բերդ համայնքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանային չափերը և մակերեսը հաստատել համաձայն՝ «Գագիկ Մեսրոպյան» ԱՁ-ի կոցմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղադրական հատակագծի:

3. Ինքնակամ կառուցված ծածկերը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված 06-101-0052-0016 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,17472 հա գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Լոռի Բերդ համայնք, գյուղ Սվերդլով, 1-ին փողոց, թիվ 6:

5. 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում սույն որոշման 1-ին կետում նշված 32,50 քմ և 43,55 քմ արտաքին մակերեսով ծածկերի և 1747,2 քմ մակերեսով զբաղեցված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն նշված կառույցը իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կնք.

2023թ. հուլիսի 06
գ. Լոռի Բերդ